

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ

**2301 «ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
«ՄԵՆԵՋԵՐ» ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ**

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ ԵՎ ՍՈՂՈՒԼԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ԵՐԵՎԱՆ 2009

III. ՌԻՍԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՊԼԱՆԸ

N	Առարկաների անվանումը և մոդուլները	Ատեստավորում ըստ կիսամյակների			Ուսանողի ուսումնական բեռնվածությունը (ժամ)				Բաշխումն ըստ կուրսերի և կիսամյակների									
		Քննութ.	Ստուգարք	Կուրս. աշխ.	Պարտադիր լսարանային բեռնվածություն			2-րդ կուրս		3-րդ կուրս		4-րդ կուրս						
					Ընդամենը	Սեռակ. ուսուցում	Լաբոր. և գործն. աշխ	Սեմինար պարապմունք	3-րդ կիս. 15 շաբ	4-րդ կիս. 14 շաբ.	5-րդ կիս. 12 շաբ.	6-րդ կիս. 12 շաբ.	7-րդ կիս. շաբ.	8-րդ կիս. շաբ.				
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ																	
1.1	Հայոց լեզվի և խոսքի մշակույթի հիմունքներ		3;4տ.		72	66	6		36	36								
1.2	Տնտեսագիտության հիմունքներ	4	3		54	48	6		30	24								
1.3	Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ		3;4տ.		54	42	12		30	24								
1.4	Իրավունքի հիմունքներ		3;4տ.		36	30	6		18	18								
1.5	Պատմություն	3			54	50	4		54									
1.6	Ռուսաց լեզու		3;4 տ.		72	12	60		42	30								
1.7	Ֆիզիկական կուլտուրա		3,4,5,6տ		106	4	102		30	28	24	24						
	ԸՆԴԱՄԵՆԸ				448	252	196		240	160	24	24						
2.	ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆԱԳԻՏԱԿԱՆ																	
2.1	Էկոլոգիայի հիմունքներ և կենսագործունեության ապահովում				36	30	6		36									
2.2	Համակարգչային օպերատորության հիմունքներ		3,4,5տ		154	22	132		46	48	60							
2.3	Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակների հիմնահարցեր		3տ.		18	12	6		18									
	ԸՆԴԱՄԵՆԸ				208	64	144		100	48	60							
3.	ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ																	
3.1	Հաղորդակցման հմտություններ		3տ		36	8	28		36									
3.2	Անվտանգություն և առաջին օգնություն		3տ		36	18	18		36									
3.3	Ընդհանուր աշխատանքային գործունեության հմտություններ		4տ		54	18	36			54								
	ԸՆԴԱՄԵՆԸ				126	44	82		72	54								
4.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ																	
4.1	Սպասարկման բնագավառի օրենսդրությունը և գործավարությունը		4տ		54	16	38			54								
4.2	Աշխատակազմի կառավարում		5տ		46	18	28				46							
4.3	Գործարար հարաբերությունների էթիկա և ղեկավարման հոգեբանություն		4տ		54	20	34			54								
4.4	Տնտեսագիտության հիմունքներ և ֆինանսական հոսքերի կառավարում		5տ		54	22	32				54							
	ԸՆԴԱՄԵՆԸ				208	76	132			108	100							
5	ՀԱՏՈՒԿ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ																	
5.1	Որակի հսկողություն		6տ		44	10	34					44						
5.2	Շուկայագիտության հիմունքներ		5տ		44	12	32				44							
5.3	Բանակցությունների տեխնիկա և գործարար կապերի հաստատում		6տ		54	18	36					54						
5.4	Ծառայությունների վաճառքի կազմակերպում		6տ		44	12	32					44						
5.5	Կազմակերպության առաջխաղացում		5տ		42	16	26				42							
5.6	Արդյունքների գնահատում		6տ		42	14	28					42						

5.7	Անգլերեն լեզվի ուսուցում. բանավոր խոսք		3տ		75	15	60		75				
5.8	Անգլերեն լեզվի ուսուցում. գրավոր խոսք		4տ		90	15	75			90			
5.9	Աշխատանք մասնագիտական տեքստի հետ		5տ		75	16	59				75		
5.10	Անգլերենի կիրառումը աշխատանքային գործընթացում		6տ		75	10	65					75	
	ԸՆԴԱՄԵՆԸ				585	138	447		75	90	161	259	
6.	ԸՆՏՐՈՎԻ		(3,4,5,6)տ		210				36	24	54	96	
	ՊԱՂՈՒՍԱՅԻՆ ԺԱՄԵՐ				123				17	20	33	53	
	ԸՆԴԱՄԵՆԸ				1908				540	504	432	432	
	ԽՈՐՀՐԳԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ				200								
	Շաբաթական ժամերը								36	36	36	36	

IV. ՆԱԽԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐ				N	VII. ԱՆՀՐԱՎԺԵՏ ԿԱԲԻՆԵՏՆԵՐԻ, ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐԻ ԵՎ ԱՐԴԵՍԱՆՈՑՆԵՐԻ ՑԱՆԿԸ
1	Մշակույթի պատմություն				ԿԱԲԻՆԵՏՆԵՐ
2	Վարվելակերպի հիմունքներ			1	չափագիտության, ստանդարտացման և սերտիֆիկացիայի,
3	Գործարար խաղեր			2	մենեջմենթի և մարքեթինգի,
				3	վիճակագրության,
	V. ՊՐԱԿՏԻԿԱ	Կիսամյակ	Շաբաթ	4	հաշվապահական հաշվառման,
1	Ուսումնական պրակտիկա տեսական ուսուցմամբ	III	3	5	աշխատանքի պաշտպանության և էկոլոգիայի,
2	Ուսումնական պրակտիկա առանց տեսական ուսուցման	IV, V, VI	6, 4, 3	6	մեթոդական աշխատանքների.
	Նախաավարտական, արտադրական պրակտիկա	VI	3	7	ընդհանուր հումանիտար և սոցիալ-տնտեսագիտական, մաթեմատիկական և ընդհանուր բնագիտական առարկաների:
	ԸՆԴԱՄԵՆԸ		19	8	
VI. ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՈՒՄ					ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՆԵՐ
Պետական քննություն I և II բլոկների առարկաներից				1	ժառայությունների կազմակերպում
				2	Համակարգչային տեխնիկայի
					ՄԱՐԶԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ
				1	Սպորտային դահլիճ
				2	Սպորտային բաց հրապարակ

VIII. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆԻ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ

1. Ուսանողների գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելու, ինչպես նաև ուսումնառության արդյունավետությունը վերահսկելու նպատակով, ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ կարող են անցկացվել առանձին առարկաների ընթացիկ /միջանկյալ/ քննություններ, ստուգարքներ, ստուգողական աշխատանքներ: Ստուգարքներն, այդ թվում՝ տարբերակված, անցկացվում են առարկայի համար սահմանված ժամերի հաշվին:
Ըստ առարկաների՝ ստուգողական աշխատանքների թիվը հաստատում է ուսումնամեթոդական խորհուրդը:
2. Լաբորատոր աշխատանքների, օտար լեզուների, համակարգչային, գործնական, սեմինար, ֆիզիկական կուլտուրայի ,ինչպես նաև ուսումնամեթոդական խորհրդի կողմից երաշխավորած առանձին առարկաների գծով ուսումնական պարապմունքների, կուրսային նախագծման և արհեստանոցներում արտադրական ուսուցման ժամանակ ուսումնական

- խումբը կարող է բաժանվել ենթախմբերի՝ յուրաքանչյուրում առնվազն 8 ուսանող՝ ելնելով ուսուցանվող առարկայի յուրահատկությունից: Համապատասխան միջոցների առկայության պայմաններում ուսումնական պարապմունքները կարող են անցկացվել առանձին ուսանողների հետ /անհատական պարապմունքներ, ուսուցման անհատական ստեղծագործական ձևեր և այլն/: Ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ առանձին առարկաների տեսական դասընթացը կարող է կազմակերպվել հոսքային պարապմունքի ձևով:
3. Նախասիրական առարկաները, դրանց ծավալը և ուսուցման ժամկետը, բայց ոչ ավելի, քան շաբաթը 4 ժամ, որոշում է քոլեջը: Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների կողմից ներկայացված նախասիրական առարկաների ծրագիրը հաստատում է քոլեջի ուսումնամեթոդական խորհուրդը:
 4. Ֆիզիկական կուլտուրայի առարկայական ծրագրով նախատեսված նյութը կարող է իրացվել նաև արտաուսումնական պարապմունքների տարբեր ձևերով մարզական ակումբներում, սեկցիաներում, խմբակներում:
 5. Ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ելնելով տեղական պայմաններից, կարելի է փոփոխել՝ պարտադիր պահպանելով տեսական և գործնական ուսուցման, մոդուլների ամփոփման, պրակտիկայի, արձակուրդի ընդհանուր տևողությունը:
 6. Մոդուլներին հատկացված ընդհանուր ժամաքանակի սահմաններում, թույլատրվում է ժամաքանակի մինչև 10 տոկոսի սահմաններում, մեկը մյուսի հաշվին փոխել մոդուլներին տրված ժամաքանակները: Ուսումնական հաստատությանը թույլատրվում է պահուստային ժամերի որոշ մասը նույնպես հատկացնել մոդուլների ուսուցմանը:
 7. Ամբիոնների, առարկայական /ցիկլային/ հանձնաժողովների ներկայացրած խորհրդատվությունների անցկացման ձևը որոշում է քոլեջը:
 8. Պետական կառավարման լիազորված մարմնի կողմից հանձնարարված փաստաթղթերի ուսումնասիրումը կատարվում է համապատասխան առարկաների ժամերի հաշվին:
 9. Պահուստային ժամերը տնօրինում է քոլեջը՝ ուսումնամեթոդական խորհրդի որոշմամբ՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության սահմանած կարգի պահանջներին համապատասխան:
 10. Ուսումնական պրակտիկան կարող է անցկացվել կենտրոնացված, կամ տեսական պարապմունքների հետ հաջորդաբար՝ պահպանելով պլանով նախատեսված ժամաքանակը: Պրակտիկայի անցկացման ժամկետը կարելի է տեղաշարժել ուսումնական տարվա նույն կիսամյակի ընթացքում: Պրակտիկայի յուրաքանչյուր ձև ավարտվում է հաշվետվությամբ՝ զնահատումով:
 11. Նախաավարտական պրակտիկան անց է կացվում կենտրոնացված կարգով, ուսումնական պլանով նախատեսված ժամկետներում:
 12. Քոլեջը, ելնելով անհրաժեշտությունից, կարող է ստեղծել լրացուցիչ կաբինետներ, մասնագիտացված լսարաններ:

ՄՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՀԱՂՈՐԴԱԿՑՄԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

ՄՈՂՈՒԼԻ ԴԱՍԻՉԸ՝ ԱՀԳ 4 - 08 - 001

ՄՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Մոլորակի նպատակն է սովորողի մոտ ձևավորել աշխատանքային ու մասնագիտական գործունեության ընթացքում, ինչպես նաև անձնական կյանքում արդյունավետ և ակտիվ հաղորդակցվելու կարողություններ:

ՄՈՂՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝ 36 ժամ
Տեսական ուսուցում՝ 18 ժամ
Գործնական աշխատանք՝ 18 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՐԱՆՁՆԵՐԸ՝ Չկան
Ուսումնառության արդյունքները՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. սահմանի ուսումնառության անձնական նպատակները.
2. բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարի պարզ թեմաների և տեքստերի մասին.
3. նախաձեռնի, պահպանի, եզրափակի երկխոսություններ և քննարկումներ.
4. մեկնաբանի սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.
5. կատարի փաստաթղթավորում:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Սահմանել ուսումնառության անձնական նպատակները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում ուսումնառության անձնական նպատակները,
- բ. ճիշտ է պլանավորում և կիրառում ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները,
- գ. ճիշտ է սահմանում ուսումնառության տարբեր եղանակները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի սահմանել ուսումնառության անձնական նպատակները, պլանավորել և կիրառել ուսումնառության անձնական նպատակների ձեռքբերմանն ուղղված ուսումնառության գործընթացները, սահմանել ուսումնառության տարբեր եղանակները: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ
Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. օգտագործում է բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք,
- բ. հաղորդումը պարունակում է պարզ տեղեկատվություն, կարծիքներ կամ գաղափարներ,
- գ. տեղեկատվության առանձնացում/խմբավորումը կատարում է նպատակային,
- դ. հաղորդումը իրականացնում է՝ հաշվի առնելով իրավիճակը և լսարանը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կհանձնարարվի բանավոր և գրավոր տեղեկատվական հաղորդում կատարել պարզ թեմաների և տեքստերի մասին: Կտրվեն մի շարք թեստային և հոգեբանական հարցեր, ինչպես նաև կառաջադրվեն տեղեկատվության նպատակային խմբավորման աշխատանքներ բանավոր և գրավոր խոսքի համապատասխան կառուցվածք ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Նախաձեռնել, պահպանել, եզրափակել երկխոսություններ և քննարկումներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է կիրառում «ակտիվ ունկնդրման» ժամանակ օգտագործվող հմտությունները, ինչպիսիք են՝
 - պարզաբանումներ ստանալու ձգտումը,
 - գրառումներ կատարելը,
 - ամփոփելը,
- բ. ազատ կերպով ձևակերպում, արտահայտում և պաշտպանում է իր գաղափարները, տեսակետներն ու կարծիքները,
- գ. ցուցաբերում է համոզելու կարողություն,
- դ. կատարում է ճիշտ ամփոփում/եզրափակում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Սովորողին կառաջադրվեն իրավիճակներ, որտեղ կարող է պաշտպանել իր գաղափարները, կտրվեն խնդիրներ և երկխոսության ընթացքում դիմացինին համոզելու, իր խոսքն ամփոփելու, եզրակացություն անելու կարողությունները ստուգելու վերաբերյալ:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, առաջադրվող խնդիրների միջոցով: Կազմակերպվում են իրավիճակային և դերային խաղեր՝ առավելագույնս նմանացված աշխատանքային իրավիճակին: Ուսուցման ընթացքում բերվում են իրական աշխատանքային փորձի օրինակներ:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Մեկնաբանել սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է նախանշում սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները,
- բ. ճիշտ է մեկնաբանում առաջադրված սխեմաները, աղյուսակները, դիագրամները, քարտեզները և նկարները.
- գ. մեկնաբանման ընթացքում օգտագործում է խոսքի համապատասխան կառուցվածք:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին առաջադրվում են սխեմաներ, աղյուսակներ, դիագրամներ, քարտեզներ և նկարներ, մեկնաբանման, դրանց նշանակությունը և նրանց միջև եղած տարբերությունները ներկայացնելու կարողությունները ստուգելու նպատակով:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, սխեմաների, աղյուսակների, դիագրամների, քարտեզների և նկարների միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Կատարել փաստաթղթավորում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է սահմանում տարբեր փաստաթղթերը՝ ըստ դրանց նշանակության,
- բ. ճիշտ է նախանշում տարբեր փաստաթղթերի օգտագործման տեղն ու դերը,
- գ. ճիշտ է կատարում տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորումը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին տրամադրվում են տարբեր փաստաթղթեր՝ պահանջելով ըստ նշանակության խմբավորում և տեղեկատվությունների փաստաթղթավորում՝ ըստ տեսակների: Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՄԵԹՈՂԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Արդյունքի ուսուցումը կատարվում է դասախոսությունների և գործնական պարապմունքների, տարբեր փաստաթղթերի օգտագործման, տարբեր տեսակի տեղեկատվությունների փաստաթղթավորման միջոցով: Կիրառվում են ձևաթղթեր, ձևաչափեր, այլ դիտակտիկ նյութեր:

Արդյունքը համարվում է ձեռքբերված կատարման բոլոր չափանիշների բավարարման դեպքում:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում`	6 ժամ
Գործնական պաշխատանք`	6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ`

ԱԱՕ4-08-001

ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`

Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել ձեռնարկություններում աշխատանքային անվտանգության կանոնների պահպանման, աշխատանքի պաշտպանության միջոցառումների իրականացման և առաջին օգնության կազմակերպման կարողություններ:

ՄՈԴՈՒ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 36 ժամ

Տեսական ուսուցում` 20 ժամ

Գործնական աշխատանք` 16 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ` 2կան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. իմանա աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.
2. իմանա անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում.
3. իմանա արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.
4. ցուցաբերի առաջին օգնություն:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ աշխատանքի պաշտպանության իրավական և կազմակերպչական դրույթները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության վերաբերյալ իրավական ակտերը.
- բ. ճիշտ է ներկայացնում ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ներքին նորմատիվային փաստաթղթերը.
- գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների խախտման հետ կապված պատասխանատվությունը.
- դ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի պաշտպանության նորմերի և կանոնների պահպանման նկատմամբ վերահսկողության ձևերը և մեխանիզմները:
- ե. ճիշտ է ներկայացնում արտադրությունում դժբախտ դեպքերի և պատահարների հետաքննության, փաստաթղթավորման և հաշվառման կարգը.
- զ. ճիշտ է ներկայացնում արտադրության տարբեր մակարդակների ղեկավարների պատասխանատվությունը աշխատանքի պաշտպանության նորմերի պահպանման վերաբերյալ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կոնկրետ հարցեր կառաջադրվեն աշխատանքի պաշտպանության բնագավառում գործող օրենքների, այլ նորմատիվ ակտերի, ձեռնարկություններում աշխատանքի պաշտպանության կազմակերպման ընդհանուր հարցերի վերաբերյալ:

Արդյունքի ձեռքբերումը բավարար է, եթե ուսանողը ցուցաբերում է նյութի անհրաժեշտ իմացություն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում: Անհրաժեշտ է ունենալ աշխատանքի պաշտպանության բնագավառի օրենքներ, այլ նորմատիվ ակտեր, ուսումնական գրականություն, հրահանգներ, լրացվող փաստաթղթերի նմուշներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իմանալ անվտանգության տեխնիկայի նորմերը և կանոնները ձեռնարկություններում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում տեխնոլոգիական սարքավորումների, մեխանիզմների շահագործման անվտանգության տեխնիկայի հիմնական պահանջները.
- բ. ճիշտ է ներկայացնում էլեկտրաանվտանգության կանոնները և պաշտպանությունը.
- գ. ճիշտ է ներկայացնում հակահրդեհային պաշտպանության կանոնները.
- դ. ճիշտ է ներկայացնում ճնշման տակ աշխատող սարքավորումների և մեխանիզմների անվտանգ շահագործման կանոնները:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվի թեսթ՝ ոչ պակաս 10 հարցերով, յուրաքանչյուր հարցի վերաբերյալ առնվազն 3 պատասխանով, որոնցից մեկը ճիշտ է: Ուսանողը պետք է նշի, թե յուրաքանչյուր կոնկրետ հարցում որն է ճիշտ պատասխանը:

Արդյունքի ձեռքբերումը կհամարվի բավարար, եթե թեսթի հարցերին տրվեն անսխալ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ ուսումնական գրականություն, անվտանգության կանոնների հրահանգներ, անվտանգության նպատակներով օգտագործվող միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Իմանալ արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջները.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում արտադրական սանիտարիայի և հիգիենայի հասկացությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում արտադրական միկրոկլիմայի նկատմամբ նորմատիվային պահանջները.
- գ. ճիշտ է թվարկում արտադրական աղմուկից և ցնցումներից պաշտպանվելու միջոցները.
- դ. ճիշտ է ներկայացնում արտադրական լուսավորվածությամբ ներկայացվող պահանջները և նորմերը:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողին կտրվեն կոնկրետ հարցեր և անհրաժեշտ գրականություն: Օգտվելով գրականությունից՝ նա պետք է կարողանա գտնել հարցերի ճիշտ պատասխանները, իսկ ըստ իրավիճակների՝ նորմաները: Բացի դրանից ուսանողը պետք է բավարար գրագիտություն ցուցաբերի այս կամ այն խախտման վնասակար և վտանգավոր հետևանքների վերաբերյալ:

Ստորև բերվում են արտադրական միկրոկլիմայի և սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչները.

- ա. արտադրական միկրոկլիմայի բաղադրիչներ՝
 - ջերմաստիճանը
 - հարաբերական խոնավությունը
 - փոշու առկայությունը
- բ. սանիտարահիգիենիկ պայմանների բաղադրիչներ՝
 - օդափոխություն
 - ջեռուցում
 - ջրամատակարարում, ջրահեռացում և այլն:

Արդյունքի ձեռքբերումը համարվում է բավարար, եթե ընդհանուր առմամբ տրվում են ճիշտ պատասխաններ՝ աննշան թերություններով:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական աշխատանք: Ուսումնական պրոցեսում անհրաժեշտ է օգտագործել ուսումնական և նորմատիվային տեղեկատվական գրականություն, գործիքներ, սարքավորումներ: Նպատակահարմար է գործնական պարապմունքներ անցկացնել արտադրամասում:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 4 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Ցուցաբերել առաջին օգնություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ցուցադրում արհեստական շնչառության իրականացումը.
- բ. ճիշտ է ցուցադրում սրտի աշխատանքի վերականգնման իրականացումը.
- գ. ճիշտ է ցուցադրում արյան հոսքի դադարեցման իրականացումը և ճիշտ է դնում վիրակապ.
- դ. ճիշտ է վիրակապում կոտրվածքները.
- ե. ճիշտ է ցուցադրում այրվածքների դեպքում առաջին օգնության ցուցաբերումը.
- զ. ճիշտ է ցուցադրում էլեկտրահարման դեպքում առաջին օգնության իրականացումը:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Ուսանողը կոնկրետ գործողությունով պետք է ցույց տա մի քանի իրավիճակներում առաջին օգնության ցուցաբերելու կարգը:

Արդյունքի ձեռքբերումը բավարար կհամարվի, եթե ճիշտ ցուցաբերվի առաջին օգնությունը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Տեսական ուսուցում և գործնական պարապմունք: Ուսուցման համար անհրաժեշտ է ունենալ առաջին օգնությանը վերաբերող գրականություն, տեսաֆիլմեր, պլակատներ, առաջին օգնության միջոցներ և այլն:

ՌԻՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿ

Տեսական ուսուցում` 2 ժամ
Գործնական աշխատանք` 6 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹՅԱՆ

ՀՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

**ՄՈԴՈՒԼԻ ՂԱՍԻՉԸ`
ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ`**

ԸԱՅ-4-08-001

Մոդուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ աշխատանքային գործունեության ընթացքում հաջողության հասնելու նախապայմանների մասին, ինչպես նաև ձևավորել ցանկացած բնագավառում անհրաժեշտ աշխատանքային կուլտուրա և էթիկա դրսևորելու, ղեկավարի և գործընկերների հետ արդյունավետ հարաբերվելու, առաջացած աշխատանքային խնդիրներն ընկալելու և համապատասխան լուծումներ տալու կարողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ` 54 ժամ`
Տեսական ուսուցում` 24 ժամ
Գործնական աշխատանք` 30 ժամ

ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ` 2 կան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ`

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է`

1. տիրապետի աշխատանքի տեղավորվելու կարողությունների.
2. դրսևորի անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ.
3. տիրապետի աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատի թիմում.
4. իմանա աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվի ղեկավարի հետ.
5. դրսևորի քննադատական մտածողություն.
6. կառավարի սթրեսը և ժամանակը, առաջացած պրոբլեմներին և կոնֆլիկտներին տա համապատասխան լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ`

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Տիրապետել աշխատանքի տեղավորվելու կարողությունների

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է շարադրում գործող աշխատանքային օրենսգրքի անհրաժեշտ դրույթները.
- բ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի որոնման ժամանակակից միջոցները և տեխնոլոգիաները, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու համար անհրաժեշտ բոլոր գործընթացները.
- գ. ճիշտ է կազմում գրավոր ինքնակենսագրություն (CV).
- դ. ճիշտ և մանրամասն բանավոր ներկայացնում է իր կենսագրությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է կազմում ինքնակենսագրությունը (CV) և մանրամասն բնավոր ներկայացնում իր կենսագրությունը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում` 6 ժամ
Գործնական պարապմունք` 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Դրսևորել անհրաժեշտ վերաբերմունք աշխատանքի և աշխատավայրի նկատմամբ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում աշխատանքի և շրջապատի նկատմամբ դրական տրամադրվելու կարողությունները.

բ. ճիշտ է ներկայացնում գործերը նկերների նկատմամբ հարգալից վերաբերմունքի և արդյունավետորեն հարաբերվելու օրինակներ:

գ. առաջադրված իրավիճակում ցուցաբերում է պատասխանատվության դրսևերումներ:

դ. ցուցաբերում է գործընկերոջը և ղեկավարին ուշադիր լսելու և հասկանալու դրսևերումներ:

ՉԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը տվել է հիմնավոր և ճիշտ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՆԵՍՈՒՐՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Տիրապետել աշխատանքի կուլտուրային և էթիկային, արդյունավետ աշխատել թիմում:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության նպատակները, արժեքները և կիրառվող ընդհանուր աշխատանքային մեթոդները, աշխատանքային և միջանձնային հարաբերությունները:

բ. ճիշտ է ներկայացնում թիմային աշխատանքի հիմնական սկզբունքները:

գ. ճիշտ է ներկայացնում թիմային խնդիրների լուծման մեթոդները,

դ. թիմային աշխատանքի առաջադրված իրավիճակում դրսևորում է անհրաժեշտ վարքագիծ՝ ցուցաբերելով փոխօգնություն, համբերատարություն, նվիրվածություն աշխատանքին և ընկերներին:

ե. ճիշտ վերաբերմունք է դրսևորում և հարգալից է կոնֆլիկտային գործընկերների նկատմամբ:

զ. առաջարկում է խնդրի ճիշտ լուծումներ առաջադրված պրոբլեմային իրավիճակում:

ՉԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՆԵՍՈՒՐՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ աշխատանքում հաջողության հասնելու նախապայմանները և պատշաճ հարաբերվող ղեկավարի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է բացատրում աշխատանքային կարգապահության և ճշտապահության կարևորությունը:

բ. ճիշտ է ներկայացնում ղեկավարի հետ հարաբերվելու ձևերը, իր և ղեկավարի իրավունքներն ու պարտականությունները:

գ. ճիշտ է ներկայացնում աշխատանքի արդյունավետության ու որակի ապահովման ընդհանուր սկզբունքները:

ՉԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՆԵՍՈՒՐՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 2 ժամ

Գործնական պարապմունք՝ 2 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 5. Դրսևորել քննադատական մտածողություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

ա. ճիշտ է գնահատում տեղեկատվության հուսալիության և զգացմունքայնության աստիճանը:

- բ. ստացած տեղեկատվությունը ճիշտ և արդյունավետորեն համադրում է առկա գիտելիքների հետ.
- գ. իրականացնում է կառուցողական քննադատություն և ճիշտ է բացատրում կառուցողական քննադատության կարևորությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ըստ առաջադրված իրավիճակի հանդես է բերում կառուցողական քննադատություն ցուցաբերելու կարողություն:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, անհրաժեշտության դեպքում նաև տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 4 ժամ

Գործնական պարապմունք՝ 3 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 6. Կառավարել սթրեսը և ժամանակը, լուծել պրոբլեմներ և կոնֆլիկտներ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

- ա. ճիշտ է ներկայացնում սթրեսի կանխարգելման և անխուսափելի սթրեսին դիմակայելու մեթոդները.
- բ. ճիշտ է կազմում իր աշխատաքնային պլանը (պայմանական աշխատանքային պլան).
- գ. ճիշտ է ներկայացնում ժամանակի արդյունավետ օգտագործման միջոցները:
- դ. բացահայտում է և ճիշտ է սահմանում պրոբլեմը տրված իրավիճակում,
- ե. ճիշտ է վերլուծում պրոբլեմը, տալիս է լուծման ճիշտ տարբերակ և գնահատում արդյունքը.
- զ. բացահայտում է ցանկացած կոնֆլիկտի պատճառները.
- է. ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի կանխարգելման եղանակները, կարողանում է դրանց տալ արագ ու արդյունավետ լուծումներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ

Արդյունքի յուրացումը գնահատվելու է հարց ու պատասխանի, ինչպես նաև գործնական կատարման հիման վրա: Արդյունքի ձեռքբերումը համարվում է դրական, եթե սովորողը ճիշտ է ներկայացնում սթրեսին դիմակայելու մեթոդները և ճիշտ կազմում պայմանական աշխատանքային պլանը ըստ առաջադրված իրավիճակի առաջարկում է պրոբլեմի լուծման ճիշտ տարբերակ, ճիշտ է ներկայացնում կոնֆլիկտի պատճառները և առաջարկում ճիշտ լուծումներ:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՆԵՐԸ

Տեսական ուսուցում, գործնական պարապմունքներ: Անհրաժեշտ է ունենալ մասնագիտական համապատասխան գրականություն, աշխատանքային պլանների օրինակներ, անհրաժեշտության դեպքում տեսաֆիլմեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ

Տեսական ուսուցում՝ 6 ժամ

Գործնական պարապմունք՝ 8 ժամ

ՄՈԴՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ՄՊԱՍԱՐԿՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ»

ՄՈԴՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝ **ՍԿՄ 4-08-001**
ՄՈԴՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Մենեջեր» (Սպասարկման կազմակերպման) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Մոդուլի նպատակն է սովորողի մոտ ձևավորել սպասարկման ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարման փաստաթղթավորումն ապահովելու և գործավարությունը կազմակերպելու կարողություններ:

ՄՈԴՈՒԼԻ ՏԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ 54 ժամ

Տեսական ուսուցում 16 ժամ

Գործնական աշխատանք 38 ժամ

Մուտքային պահանջները՝ 2կան

ՈՒՍՈՒՄՆԱՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝
1. իմանա գործավարության դերը կառավարման համակարգում, ապահովի ղեկավարման փաստաթղթավորումը
 2. լրացնի սպասարկման ոլորտի ձեռնարկություններում գործող տիպային փաստաթղթեր, աշխատի փաստաթղթերի հետ
 3. օգտվի ժամանակակից տեխնոլոգիաներից՝ տեղեկատվության փոխանակման, մշակման, փաստաթղթավորման և պահպանման գործում.

4. իմանալ սպասարկման ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրությունը, կիրառի դրա պահանջները:

ԳԱՄԱՅՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Մոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ գործավարության դերը կառավարման համակարգում, ապահովել ղեկավարման փաստաթղթավորումը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում գործավարության դերը կառավարման համակարգում.
- բ. ճիշտ է թվարկում փաստաթղթաշրջանառությանը ներկայացվող՝ օրենսդրությամբ սահմանված հիմնական պահանջները.
- գ. ստեղծում է ձեռնարկության գործունեությունը համակարգող և ուղղորդող կազմակերպական-կարգադրական փաստաթղթերի փաթեթ.
- դ. ճիշտ է ներկայացնում կազմակերպիչի և որակի հսկիչի դերը փաստաթղթավորման գործառնություններում:

ԳԱՄԱՅՏՄԱՆ ՄԻՋՑԸ

Գործնական առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Սպասարկման որևէ կազմակերպության օրինակով (օրինակ՝ հագուստի քիմ. մաքրում) կազմել ղեկավարման փաստաթղթերի փաթեթ:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ծանոթ է գործավարման նորմատիվներին համապատասխանող անհրաժեշտ փաստաթղթերի ձևերին, կարողանում է ստեղծել կազմակերպական-կարգադրական փաստաթղթեր և տիրապետում է դրանց կիրառման մեթոդներին: Բանավոր հարցերը կարող են վերաբերել ձեռնարկության աշխատանքի առանձնահատկություններին:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և արտադրական պրակտիկայի ընթացքում կատարած ուսումնասիրության հիման վրա:

Անհաժեշտ է ունենալ կարգադրական-կազմակերպական, աշխատանքային հարաբերություններին, ֆինանսահաշվարկային գործարքներին, առևտրային գործունեությանը և այլ բնագավառներին վերաբերող փաստաթղթերի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ – 6 ժամ

Գործնական աշխատանք՝ – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Լրացնել սպասարկման ոլորտի ձեռնարկություններում գործող տիպային փաստաթղթերը, աշխատել փաստաթղթերի հետ:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է լրացնում է ներքին և արտաքին գործավարության մեջ կիրառվող տիպային փաստաթղթերը՝ պլաններ, պայմանագրեր, կարգագրեր, հաշվետվություններ, ապրանքագրեր և այլն.
- բ. ճիշտ է փաստաթղթավորում բանակցությունների, հանդիպումների արդյունքները, ճիշտ է ձևավորում միջազգային համաձայնագրեր և պայմանագրեր.
- գ. ճիշտ է ներկայացնում տարբեր փաստաթղթերի պահանջների կատարման ձևերն ու մեթոդները.
- դ. ճիշտ է ներկայացնում փաստաթղթերի մշակման և համակարգման աշխատանքների կազմակերպման եղանակները:

ԳԱՄԱՅՏՄԱՆ ՄԻՋՑԸ՝

Գործնական աշխատանք.

Թեման՝ Լրացնել կոնկրետ կազմակերպության համար (օրինակ՝ քուլեջի) միջոցների ելքի, մուտքի և ներքին փաստաթղթերի տիպային ձևեր:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է կողմնորոշվում տիպային փաստաթղթերն ընտրելու հարցում: Ամբերի լրացումն է ընտրված օրինակները: Համակարգում է փաստաթղթերը:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և արտադրական պրակտիկայի ընթացքում կատարած ուսումնասիրության հիման վրա:

Անհաժեշտ է ունենալ կարգադրական-կազմակերպական, աշխատանքային հարաբերություններին, ֆինանսահաշվարկային գործարքներին, առևտրային գործունեությանը և այլ բնագավառներին վերաբերող փաստաթղթերի օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ – 4 ժամ
Գործնական աշխատանք՝ – 8 ժամ

**ԱՐԴՅՈՒՆՔ 3. Օգտվել ժամանակակից տեխնոլոգիաներից՝ տեղեկատվության փոխանակման, մշակման, փաստաթղթավորման և պահպանման հարցերում:
ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝**

- ա. ճիշտ է ներկայացնում տեղեկատվության մշակման, փաստաթղթավորման, պահպանման գործում ժամանակակից տեխնոլոգիաները.
- բ. ճիշտ է ցուցադրում պահպանության ենթակա նյութերի և փաստաթղթերի անվանացանկին համապատասխան էլեկտրոնային գրադարան ստեղծելու գործողություններ՝
- գ. ճիշտ է ցուցադրում էլեկտրոնային փոստից օգտվելու գործնական օրինակներ.
- դ. ցուցադրում է ինտերնետից և գրասենյակային սարքավորումներից (պատճենահանման սարք, ֆաքս, տեսաքիչ և այլն) ճիշտ ու հմտորեն օգտվելու օրինակներ.

ԳԱՄՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Կազմել մեկ համայնքում գտնվող նմանատիպ 2-3 ձեռնարկությունների համար եռամսյակային հաշվետվություն՝ համայնքի հարկային տեսչության առաջադրած ձևերի համաձայն:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը սահմանված ժամանակահատվածում կարողանում է համակարգչային լոկալ ցանցով կապվել գործընկեր կազմակերպությունների հետ, ստանալ համապատասխան տեղեկատվություն, միավորել հաշվետվությունները և ուղարկել հարկային տեսչություն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում համակարգչային կիրառական ծրագրերին բավարար չափով տիրապետելու և ինտերնետ ցանցից օգտվելու շնորհիվ:

Անհրաժեշտ է ունենալ ինտերնետ կապով համակարգիչ, առաջադրանքի պահանջներին համապատասխան բլանկների ձևեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ – 4 ժամ
Գործնական աշխատանք՝ – 12 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Իմանալ սպասարկման ոլորտին առնչվող ՀՀ օրենսդրությունը, կիրառել դրա պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում սպասարկման ոլորտի պետական կարգավորման գործառույթները, ոլորտում իրավական կարգավորման ենթակա հարաբերությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում սպասարկման բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրության հիմնական դրույթները, դրանց կիրարկման անհրաժեշտությունը.
- գ. ճիշտ է բնութագրում սպասարկման ոլորտի սուբյեկտներին օրենսդրությամբ ներկայացվող պահանջները.
- դ. ճիշտ է ներկայացնում սպասարկման բնագավառին առնչվող ՀՀ օրենսդրության պահանջների կիրառման օրինակներ:

ԳԱՄՐԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Ի՞նչ քայլերի կարող է դիմել զբոսաշրջիկը, եթե մեկնելով նշանակված վայր՝ համոզվում է, որ տեղի պայմանները չեն համապատասխանում ծառայություն մատուցող կազմակերպության հետ իր կնքած պայմանագրի բովանդակությանը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը համոզիչ ձևով պաշտպանում է իր իրավունքները՝ հենվելով ՀՀ օրենքների վրա, օրինակ՝ ՀՀ օրենքը «Սպառողների իրավունքի պաշտպանության մասին», ՀՀ օրենքը «Արտադրանքի և ծառայությունների հավաստագրման մասին» և այլն:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ ծառայությունների բնագավառին վերաբերող օրենքներ, գրականություն, ինտերնետ կապով համակարգիչ, պայմանագրերի ձևեր, հայցադիմումի ձևեր:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ – 2 ժամ
Գործնական աշխատանք՝ – 12 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»
ՍՈՂՈՒԼԻ ՂԱՍԻՉԸ **ՍԿՄ4-08-002**
ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «Մեներջեր» (Սպասարկման կազմակերպման) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Սողուլի նպատակն է ուսանողի մոտ ձևավորել աշխատանքային պլանի մշակման, աշխատակիցների ընտրության, նրանց կատարած աշխատանքի վարձատրության կազմակերպման և կատարված աշխատանքների որակի որոշման, պարտականությունների և իրավունքների մշակման, մասնագիտական որոշումների ընդունման, ինչպես նաև աշխատակիցների հետ ճիշտ հարաբերվելու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ՝	46 ժամ
Տեսական ուսուցում՝	18 ժամ
Գործնական աշխատանք՝	28 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՍԿՄ4-08-001. մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը յուրացնելուց հետո ուսանողը պետք է՝

1. մշակի աշխատանքային պլան.
2. իրականացնի կադրերի (թեկնածուների) ընտրություն.
3. մշակի աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականություններն ու իրավունքները, աշխատակիցներին ներկայացվող պահանջները.
4. գնահատի և հսկի աշխատակազմի աշխատանքը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Մշակել աշխատանքային պլան ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում կազմակերպության աշխատանքային պլանի նպատակները, կառուցվածքը, այն կազմելու սկզբունքներն ու մոտեցումները.
- բ. ճիշտ է կազմում առաջադրված պայմանական կազմակերպության աշխատանքային պլանը՝ ընդունված չափանիշներին համապատասխան:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գրավոր առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Ծառայություններ մատուցող, ուսանողին հայտնի որևէ կազմակերպության համար կազմել մեկ տարվա աշխատանքային պլան (այդպիսի կազմակերպություն կարող է լինել այն կազմակերպություններից մեկը, որտեղ ուսանողը անց է կացրել արտադրական պրակտիկան):

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե պլանը ընդգրկում է ձեռնարկության գործունեության բոլոր բնագավառները, կազմում է նրա բիզնես-պլանի մի մասը, միտված է ծառայությունների մատուցման որակի բարձրացմանը և կարող է ապահովել նրա շահութաբերությունը:

ՍԵԹՈՂԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում «Ծյուղային էկոնոմիկա», «Մարքեթինգ», «Սոցիոլոգիայի և հոգեբանության հիմունքներ», «Սպասարկման ձեռնարկությունները Հայաստանում», «Գործարարությունը սպասարկման ոլորտում» դասընթացներից ստացած գիտելիքների և կարողությունների հիման վրա:

Անհրաժեշտ է ունենալ գրականություն, աշխատանքային պլանի նախորդ տարիների օրինակներ, տնտեսական գործունեության վերլուծության վերաբերյալ մի քանի տարվա հաշվետվությունների օրինակներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ – 6 ժամ

Գործնական աշխատանք՝ – 6 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Իրականացնի կադրերի (թեկնածուների) ընտրություն:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում թեկնածուների որոնման ձևերը.
- բ. տալիս է առաջարկվող աշխատանքի ճիշտ և հստակ նկարագրություն.
- գ. ճիշտ է գնահատում թեկնածուների ընդունակություններն ու կարողությունները.
- դ. արաջադրված իրավիճակում ճիշտ է կազմում մրցութային թեսթը, (հարցաշարը).
- ե. հարցազրույցի ժամանակ ճիշտ և հստակ է կառուցում խոսքը (հարցը):

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական առաջադրանք և տեսական հարցեր.

Թեման՝ Նոր կազմավորվող սպասարկող ձեռնարկության համար ընտրել կադրեր՝ գործադիր տնօրեն, մենեջեր, առաքիչ, օպերատորներ, հաշվապահ, հավաքարար, պահակ (նշել ձեռնարկության տիպը՝ առևտրական, արտադրական, կենցաղ սպասարկման, ուսումնական, առողջապահական և այլն):

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ընտրության հարցում օգտագործել է բոլոր ռեզերվները, հենվել է թեկնածուների պրոֆեսիոնալ պատրաստվածության և ձեռներեցության վրա, հաշվի է առել թեկնածուների անձնական հատկանիշները, սոցիալական վիճակը, կոլեկտիվի կազմում աշխատելու ունակությունը և այլն:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում թեկնածուների ներկայացրած փաստաթղթերի ուսումնասիրման, անհատական հարցումների և ուսումնասիրությունների հիման վրա:

Անհրաժեշտ է ունենալ բջջային, քաղաքային հեռախոսային կապ, ինտերնետ կապով համակարգիչ: Առանձին դեպքերում ուսանողը կարող է դիմել մասնագետների՝ վիճակագիրների, սոցիոլոգների, բժիշկների, մեծ փորձ ունեցող կադրային աշխատողների:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝	2 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Մշակի աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականություններն ու իրավունքները, աշխատակիցներին ներկայացվող պահանջները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է կատարում աշխատանքի բաժանում.
- բ. ճիշտ է մշակում և ներկայացնում յուրաքանչյուր աշխատակցին ներկայացվող պահանջները.
- գ. ճիշտ է մշակում աշխատակիցների պարտականություններն ու իրավունքները:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գրավոր առաջադրանք և բանավոր հարցեր.

Թեման՝ Մշակել վերը նշված աշխատակիցներից առնվազն երկուսի ֆունկցիոնալ պարտականություններն ու իրավունքները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ստեղծված փաստաթղթի բովանդակությունը բխում է կազմակերպության կանոնադրությունից, բնագավառի իրավական դաշտի նորմաներից և ներքին կարգապահական կանոններից:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում «Սպասարկման կազմակերպումը ծառայությունների ոլորտում», «Իրավունքի հիմունքներ», «Կառավարման հոգեբանություն», «Գործավարություն», «Մարքեթինգ» դասընթացների համապատասխան թեմաների ուսումնասիրության ժամանակ ստացած գիտելիքների և կարողությունների շնորհիվ:

Անհրաժեշտ է ունենալ կազմակերպության օրինակելի կանոնադրություն, գրականություն, ինտերնետ կապով համակարգիչ, աշխատակցի ֆունկցիոնալ պարտականությունների պատրաստի օրինակ:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Գնահատել և հսկել աշխատակազմի աշխատանքը:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում կատարված աշխատանքների վերլուծության եղանակներն ու մեթոդները.
- բ. ըստ նախորդք մշակված չափանիշների՝ ճիշտ է իրականացնում աշխատակիցների գործունեության վերահսկման գործընթացը.
- գ. կատարված աշխատանքների գնահատման համար ճիշտ է մշակում համապատասխան պաշտոնական հրահանգներն ու չափորոշիչները

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Թեսթային հարցեր.

Թեման՝ Կազմակերպության ներքին կարգապահական կանոնների պահպանումը և աշխատակիցների աշխատանքի գնահատականը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը ճիշտ է պատասխանում առաջադրված հարցերի առնվազն 90%-ին:

ՄԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում «Աշխատակազմի կառավարում» դասընթացի համապատասխան թեմաների ուսումնասիրման ճանապարհով:

Անհրաժեշտ է ունենալ գրականություն, մշակված պաշտոնական հրահանգներ և չափանիշներ, աշխատակիցների ֆունկցիոնալ պարտականությունների հաստատված ցանկ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝

Տեսական ուսուցում՝	4 ժամ
Գործնական աշխատանք՝	6 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ «ԳՈՐԾԱՐԱՐ ԶԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԷԹԻԿԱ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԶՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝ **ՍԿՄ 4-08-003**
ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝

Այս մոդուլը նախատեսված է «ՍԵՆԵՋԵՐ» (Սպասարկման կազմակերպման) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Սոդուլի նպատակն է սովորողին տալ գիտելիքներ ծառայությունների կազմակերպման ոլորտում գործարար հարաբերությունների էթիկայի օրենքների մասին, ինչպես նաև ձևավորել գործընկերների և հաճախորդների հետ հաղորդակցվելիս բարեկիրք վարվելակերպ դրսևորելու, աշխատավայրում հոգեբանական առողջ մթնոլորտ ստեղծելու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ	54 ժամ
Տեսական ուսուցում՝	20 ժամ
Գործնական աշխատանք՝	34 ժամ

ՍՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելու համար սովորողը պետք է անցած լինի ՍԿՄ4-08-002. մոդուլը:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլը ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է՝

1. իմանա ղեկավարման էթիկայի և գործարար հարաբերություններում վարվելակերպի կանոնները.
2. սպասարկման ոլորտում ստեղծի հյուրընկալ մթնոլորտ, հաճախորդների նկատմամբ լինի հոգատար և բարեհամբույր, կիրառի օբյեկտիվության և փոխադարձ հարգանքի սկզբունքը.
3. կառավարի էթիկական կոնֆլիկտները, հոգեվիճակների, զգացմունքների դրսևորումները.
4. պատշաճ վարվեցողությամբ և հոգեբանական գործոնների կիրառմամբ հաճախորդներին մղի ծառայության համար նպաստավոր որոշումների կայացման:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սոդուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ ղեկավարման էթիկայի և գործարար հարաբերություններում վարվելակերպի կանոնները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում ծառայությունների ղեկավարման էթիկայի սկզբունքները.
- բ. ճիշտ է ներկայացնում գիտի բոլոր ծառայությունների աշխատակիցների վարվեցողության կանոնները և դրանց կատարմանը հետևելու եղանակները.
- գ. ճիշտ է ցուցադրում ղեկավարի և ենթակայների շփման կուլտուրայի դրսևորումներ.
- դ. ճիշտ է ցուցադրում աշխատողների նկատմամբ հոգատար և պահանջկոտ վերաբերմունքի օրինակներ:

ԳՆԱՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական խաղեր և բանավոր հարցեր.

Խաղի թեման՝ 2-3 զույգ՝ մենեջեր և գործարար, բանակցում են տարբեր թեմաների շուրջ, որից հետո գնահատվող ուսանողը գնահատում է մենեջերի աշխատանքը: Զարգերը վերաբերում են ղեկավարման էթիկայի կանոններին:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե գնահատվող ուսանողը հիմնականում կարողանում է ներկայացնել՝ արդյո՞ք մենեջերը պահպանեց վարվելակերպի կանոնները, կամ ի՞նչ սխալներ թույլ տվեց երկխոսության ընթացքում: Զարգուպատասխանի արդյունքում դասախոսը համոզվում է, որ ուսանողը գիտի ղեկավարման էթիկայի կանոնները:

ՍԵԹՈՂԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում «էթիկան և էսթետիկան ծառայությունների ոլորտում» և «Ղեկավարման հոգեբանություն» դասընթացների ուսուցման ժամանակ ստացած գիտելիքների հիման վրա:

Անհրաժեշտ է ունենալ գրականություն, համակարգիչներ: Ցանկալի է լսարանում ունենալ 10-12 ուսանողներ:

Ուսուցման երաշխավորված ժամաքանակը՝

Տեսական ուսուցում՝	6 ժամ
--------------------	-------

Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2. Սպասարկման ոլորտում ստեղծել հյուրընկալ մթնոլորտ, հաճախորդների նկատմամբ լինել հոգատար և բարեհամբույր, կիրառել օբյեկտիվության և փոխադարձ հարգանքի սկզբունքը ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ցուցադրում է աշխատողների հանդերձների նկատմամբ ճիշտ վերաբերմունքի դրսևորման օրինակներ.
- բ. ցուցադրում է աշխատողների արտաքին տեսքին և անձնական հիգիենայի պահպանմանը հետևելու օրինակներ.
- գ. ճիշտ է մեկնաբանում աշխատողի անձնական կուլտուրան՝ որպես սպասարկման որակի ապահովման անբաժանելի մաս.
- դ. ցուցադրում է սպասասրահների կահավորման նկատմամբ ուշադրության դրսևորման օրինակներ.
- ե. ցուցադրում է հաճախորդներին հյուրասիրելու կամ հետաքրքիր զբաղմունք առաջարկելու օրինակներ.
- զ. ցուցադրում է հաճախորդներին հոգատարությամբ և համբերատար ունկնդրելու օրինակներ.
- է. ցուցադրում է այլ ազգերի ներկայացուցիչների սպասարկման առանձնահատկությունների օրինակներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Վերլուծել որևէ կազմակերպության մեներջերի (որտեղ ուսանողը անց է կացրել արտադրական պրակտիկա) գործունեությունը որոշակի ժամանակահատվածում:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանում է գնահատել մեներջերի աշխատանքը, մասնավորապես ուշադրություն է դարձնում հետևյալ հարցերի վրա.

- ա. ընդունել հաճախորդին.
- բ. ցուցաբերել հաղորդակցվելու կուլտուրա.
- գ. կազմակերպության շուրջ ստեղծել բարեհամբույր մթնոլորտ.
- դ. իր իրավասության շրջանակներում լուծել հաճախորդի մոտ առաջացող պրոբլեմները.
- ե. բանակցելու ընթացքում շտկել սեփական վարքագիծը կամ մոտեցումը՝ ելնելով ակնկալվող արդյունքներից:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով:

Անհրաժեշտ է ունենալ կահավորված սպասասրահ, հյուրասիրության պարագաներ, տեղեկատվական ամսագրեր, գովազդային ցուցանմուշներ, գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝	6 ժամ
Գործնական աշխատանք՝	10 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 3. Կառավարել էթիկական կոնֆլիկտների, հոգեվիճակների, զգացմունքների դրսևորումները:

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում սպասարկման գործունեության հոգեբանական առանձնահատկությունները.
- բ. ճիշտ է ներկայացնում խմբի ղեկավարի և լիդերի տարբերությունները, հեղինակության միջոցով էթիկական կոնֆլիկտները լուծելու մեխանիզմները.
- գ. ցուցադրում է անձնական օրինակով ներգործելու օրինակներ.
- դ. ցուցադրում է հոգատար վերաբերմունքով և ուշադրություն դարձնելու եղանակով աշխատողի մոտ այլ հոգեկան իրավիճակներ ձևավորելու օրինակներ:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական առաջադրանք.

Թեման՝ Նկարագրել կոնֆլիկտային իրավիճակներ և ներկայացնել կոնֆլիկտների հանգուցալուծմանն ուղղված սեփական որոշումներն ու մոտեցումները:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը կարողանում է նշել կոնֆլիկտի առաջացման պատճառները, կոնֆլիկտային իրավիճակների կարգավորման համար առաջարկում է իրատեսական մեթոդներ, կարևորում է հոգեբանական գործոնը կառավարչական որոշումներ ընդունելու ժամանակ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում «Կառավարման հոգեբանություն» դասընթացի ուսուցման շնորհիվ:

Անհրաժեշտ է ունենալ համանման խնդիրն վերաբերող որևէ տեսաերիզ, տեխնիկական միջոցներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 4. Պատշաճ վարվեցողությամբ և հոգեբանական գործոնների կիրառմամբ հաճախորդին մղել՝ ծառայության համար նպաստավոր որոշումներ կայացնելուն

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում հաճախորդի հոգեբանական տեսակները.
- բ. ճիշտ է որոշում անձի գործարար շփումների անհրաժեշտ հատկանիշները.
- գ. բանակցությունների ընթացքում ճիշտ է կիրառում «մեղմ մոտեցում», «կոշտ մոտեցում» սկզբունքները և համոզելու մեթոդը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գրավոր առաջադրանք.

Թեման՝ Նկարագրել մարդկային բնավորության և աշխատառճի այն հատկանիշները, որոնց շնորհիվ մենեջերը կարող է վստահություն ստեղծել հաճախորդների մոտ, ընդլայնել գործընկերների շրջանակը, ծառայությունների ոլորտում բարձրացնել ձեռնարկության վարկանիշը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը հարցերին տվել է հիմնավոր և գրագետ պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՐՄԱՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական պարապմունքների միջոցով: Անհրաժեշտ է ունենալ գովազդային ցուցանմուշներ, գրականություն:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ 4 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ՍՈՂՈՒԼԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ

«ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ»

ՍՈՂՈՒԼԻ ԴԱՄԻՉԸ՝

ՍԿՄ 4-08-004

ՍՈՂՈՒԼԻ ՆՊԱՏԱԿԸ՝ Այս մոդուլը նախատեսված է «Մենեջեր» (Սպասարկման կազմակերպման) որակավորմամբ մասնագետի պատրաստման համար: Սողուլի նպատակն է ուսանողին տալ գիտելիքներ տնտեսություն ստեղծելու, զարգացնելու հիմնական փուլերի մասին, ինչպես նաև ձևավորել ֆինանսական հոսքերի շարժի՝ մուտքեր, ծախսեր, շրջանառություն հաշվարկելու և կանոնավորելու կարողություններ:

ՍՈՂՈՒԼԻ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

54 ժամ

Տեսական ուսուցում՝ 22 ժամ

Գործնական աշխատանք՝ 32 ժամ

ՍՈՒՔԱՅԻՆ ՊԱՋԱՆՋՆԵՐԸ՝

Չկան

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ՝

Այս մոդուլն ուսումնասիրելուց հետո ուսանողը պետք է.

1. իմանա սպասարկման տնտեսության կազմակերպման հիմնական սկզբունքները, մատակարարման և սպառման, առաքման առանձնահատկությունները, հիմնական և շրջանառու միջոցների շարժը.
2. տարբերակի սպասարկման ոլորտի կազմակերպությունները՝ կախված ծառայության տեսակից.
3. իմանա սպասարկման կազմակերպման տարբեր հաստատություններին ներկայացվող պահանջները, մատուցվող ծառայությունների և հաստատության գույքի հիմնական ցանկերը.
4. կատարի ֆինանսական մուտքի և ելքի, ֆինանսական միջոցների շրջանառության հաշվարկներ, որոշի ներդրումների առաջնահերթությունը:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱՐԳԸ՝

Սողուլի ընդունելի կատարողականը յուրաքանչյուր արդյունքի համար սահմանված կատարման չափանիշների բավարար մակարդակի ապահովումն է:

ԱՐԴՅՈՒՆՔ 1. Իմանալ սպասարկման տնտեսության կազմակերպման հիմնական սկզբունքները, մատակարարման և սպառման, առաքման առանձնահատկությունները, հիմնական և շրջանառու միջոցների շարժը.

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

- ա. ճիշտ է ներկայացնում սպասարկման տնտեսության էությունը, կազմակերպման հիմնական սկզբունքները, ծագման և զարգացման փուլերը.
- բ. ճիշտ է նկարագրում մատակարարման և առաքման (սպառման) առանձնահատկությունները.
- գ. ճիշտ է նկարագրում հիմնական և շրջանառու միջոցների տարբերությունը, շարժի հաշվարկը.
- դ. տարբերակում է նյութական և ֆինանսական միջոցների առանձնահատկությունները, հաշվառելու կարգը, տեղաբաշխման առաջնայնությունները:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Հարցաշար գրավոր քննության համար.

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը բոլոր հարցերին տվել է մասնակի թերություններով բավարար պատասխաններ:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

Արդյունքը ձեռք է բերվում տեսական ուսուցման և գործնական վարժությունների կատարման միջոցով: Ուսանողը պետք է յուրացրած լինի «Տնտեսագիտության տեսության հիմունքներ», «Միկրո և մակրոէկոնոմիկա», «Ֆինանսական միջոցներ» դասընթացների համապատասխան բաժինները:

Անհատաշտ է ունենալ գրականություն, ձեռնարկության բիզնես-պլանը, սպասարկման ձեռնարկությունների տեղաբաշխման սխեման, տարածքի բնակչության կազմի վերաբերյալ տեղեկատուներ:

ՈւՍՈՒՑՄԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՎԱԾ ԺԱՄԱՔԱՆԱԿԸ՝

Տեսական ուսուցում՝ 6 ժամ
Գործնական աշխատանք՝ 8 ժամ

ԱՐԴՅՈՒՆՔ 2 Տարբերակի սպասարկման ոլորտի կազմակերպությունները՝ կախված ծառայության տեսակից

ԿԱՏԱՐՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ՝

ա. ճիշտ է թվարկում և նկարագրում սպասարման տնտեսության կազմակերպման հաստատությունների կարգերը.

բ. ճիշտ է դասակարգում սպասարման տնտեսության կազմակերպման հաստատությունները՝ ըստ ուղղվածության և տեսակների.

գ. ճիշտ է պատկերացնում ծառայություն մատուցելու տարրերի փոխգործակցությունը:

ԳԱՐՅԱՏՄԱՆ ՄԻՋՈՑԸ՝

Գործնական աշխատանք.

Թեման՝ Օգտվելով սպասարկման ոլորտի ձեռնարկությունների և ծառայությունների դասակարգման ցանկերից՝ լրացնել տրված աղյուսակը:

Արդյունքը համարվում է ձեռք բերված, եթե ուսանողը աղյուսակը լրացնում է անթերի:

ՄԵԹՈԴԱԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԸ՝

